Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սիսիանի հ. 2 հիմնական

Թեմա՝ Ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը «գրականություն» առարկայի շրջանակներում:

Վերապատրաստող, մենթոր՝ Արմինե Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Ալլա Առուստամյան

Սիսիան - 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման բնագավառում վերջին շրջանում մեծ փոփոխություններ կատարվեցին, որոնք մեթոդական շատ սկզբունքներ վերափոխեցին։ Այս նորագույն ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ աշակերտների ընկալման հնարավորությունների ու մտածողության բնույթի մեր պատկերացումները շատ հարցերում միանգամայն հնացած են։ Հենց դա էլ հիմք տվեց հին կամ արդեն հնացած այդ ուսուցման համակարգը մեթոդական սկզբունքներով արմատապես վերափոխելու։

Ինչպես հայտնի է, ուսուցման համակարգում այժմ տարբերակում են երկու մեթոդ (սկզբունք)՝ ավանդական և ժամանակակից (նոր)։

Ավանդական մեթոդը գերազանցապես հենվում էր աշակերտների հիշողության վրա, արտահայտվում էր ուսուցչի կողմից պարաստի գիտելիքների մատուցումով, իսկ այժմ՝ ժամանակակից (փոխներգործուն), որը հիմնականում հենվում է երեխաների մտածողության վրա, արտահայտում է աշակերտների ուժերին ու կարողություններին համապատասխան խնդիր-առաջադրանքների ինքնուրույն կատարումը։ Ըստ այդմ՝ այն, ինչ երեխան ձեռք է բերում սեփական աշխատանքով՝ իր առաջ դնելով նպատակ և դրան հասնելու հաջորդականություն, որպես ինքնուրույն դիտումներից ու փորձերից հանված եզրակացություն, որը երբեք չի մոռացվում, դառնում է նրա նպատակի կատարման հիմնաքարը։

Այդ ամենը դառնում է համոզմունք՝ իրերն ու երևույթները ճիշտ ընկալելու մտածողություն։

Ավանդական մեթոդը համակ ըգի է բերում ուսումնական աշխատանքի միայն առաջին մասը՝ դասավանդումը՝ այսինքն այն, ինչ պիտի անի ուսուցիչը, իսկ աշխատանքը աշակերտի անուշադրության է մատնվում և մեթոդական հիմնավորում չի ստանում։ Այսօր ուսումնական աշխատանքը չի կարելի պատկերացնել առանց աշակերտի կատարած մտածված, հետևողական, հետազոտական ու նպատակային աշխատանքի։ Այդպես էլ ուսուցչինը. նախ իր առաջ պետք է դնի նպատակ, թե ինչ պետք է կարողանա կատարել,

իմանալ նյութի յուրացումից հետո և նշել դրան հասնելու ողջ գործընթացի աստիճանական կատարումը, իսկ վերջում յուրացածը որոշակի կարողությունների և հմտությունների վերածել:

Մեթոդն ինքնին ընդամենը գործիք է՝ դասի նպատակին հասնելու համար. կարևոր է ճիշտ ընտրել և օգտագործել այդ գործիքը՝ ուսուցման նախապես պայմանավորված նպատակին հասնելու համար:

Փոխներգործուն մեթոդով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին:

Փոխներգործել նշանակում է ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ գտնվել: Եթե ակտիվ մեթոդների դեպքում ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա փոխներգործուն մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Այս մեթոդի դեպքում դասավանդողը առաջատար դերում չէ: Նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է: Ահա այդ սխեման.



Փոխներգործուն մեթոդի կիրառման դեպքում ուսուցչի կողմից չի մատուցվում պարտադիր գիտելիքներ, այլ հնարավորություն է տրվում աշակերտներին ակտիվացնել իրենց գիտելիքները, հիշողությունը, ինչպես նաև պրակտիկ գործունեության ընթացքում ձեռք բերել նորանոր գիտելիքներ և հմտություններ։

Պետք է իմանա.

- ✓ կենսագրական տեղեկություններ գրողի մասին,
- ✓ ուսումնասիրվող գրական երկի բովանդակությունը,
- ✓ չափածո ստեղծագործությունների բնորոշ առանձնահատկությունները,
- ✓ գրական սեռերը, ժանրերը, դրանց բնորոշ առանձնահատկությունները։

Պետք է կարողանա.

- ✓ ստեղծել գրողի գրական դիմանկարը,
- ✓ տարբերակել արձակ և չափածո ստեղծագործությունը, մատնանշել դրանց կառուցվածքային առանձնահատկությունները,
- ✓ տարբերել գրական սեռերը և ժանրերը,
- ✓ գրական ստեղծագործությունում ցույց տալ պատկերավորման միջոցները, ոճական առանձնահատկությունները,
- ✓ ելույթ ունենալ դասարանի առջև, ներկայացնել գրողի կենսագրությունը, ցույց տալ նրա կենսագրության և հեղինակած գրական երկի միջև առնչությունները,
- ✓ ստեղծել ձայնաշար բանաստեղծությունների շուրջ,
- ✓ գնահատել գրող-քաղաքացուն, նրան ծավալած գործունեությունը ազգային արժեքների զարգացման և տարածման գործում,
- ✓ դրսևորել քննադատական մտածողություն,
- ✓ դրսևորել հետաքրքրություն գրքի և ընթերցանության հանդեպ։

Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդներ՝ օգտագործել այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ։ Իհարկե, այս մեթոդների կիրառումը ուղղված են առաջնային

գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնարին է անցկացնել ողջ ուսուցումը միայն փոխներգործուն մեթոդով: Դրանց հետ զուգահեռ գործածվում է ավանդական մեթոդները՝ պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառել ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է աշակերտի մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը, հաղորդակցական կարողությունը զարգացնել և ակտիվացնել: Այս մեթոդը թույլ է տալիս նաև փոխել ավանդական սեղանների դասավորությունը: Սեղանները զույգ-զույգ միացնելով՝ ստանում ենք կլոր սեղանների տպավորություն, և աշակերտները կարողանում են կատարել խմբային աշխատանքներ՝ մեկը մյուսին օգնելով, այստեղ բացառվում է որևէ մեկը աջակցությունը: Տեղի է ունենում մտքերի փոխանակում իրար մեջ, որը կատարվում է բարյացակամորեն: Դա նպաստում է ոչ միայն նոր գիտելիքներ ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը՝ այն բերելով ավելի բարձր մակարդակի՝ համագործակցային ձևի: Փոխներգործուն մեթոդը դառնում է ավելի արդյունավետ, և ցանկացած աշակերտ զգում է իր մասնակցության և անձի կարևորությունը:

Խմբային աշխատանքի դրական կողմերն են.

- ⇒ աշակերտները սովորում են միմյանցից, ինչպես նաև սովորում են սովորել,
- ⇒ ձևավորվում և զարգանում են հանդուրժողականության, հաղորդակցական և շփման հմտություններ,
- ⇒ զարգանում է պատասխանատվության զգացում, պատասխանատու է ամբողջ խմբի առջև,
- ⇒ ստեղծվում են ինքնադրսևորման և ինքնաարտահայտման հնարավորություններ,

⇒ խթանում է ճիշտ ձևակերպված, հստակ և դիպուկ խոսքի ձևավորումը, քանի որ իր մտքերն ընկերների հաղորդելու համար նա պիտի աշխատի դրանք ձևակերպել պարզ և հասկանալի։

Ծրագրում և դասագրքերում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ, որոնք իրենց արտահայտությունները պետք է գտնեն ընտրված մեթոդներում։

Ուսուցման մեթոդ ասելով հասկանում ենք մի գործընթաց, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին։ Ուսուցման մեթոդն իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝

1. Ի՞նչ սովորել,
2. ի՞նչ սովորեցնել,
3. ինչո՞ւ սովորեցնել։

Այս բոլորի իրականացման համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարավոր ձևեր, որոնք, հանդիսանալով ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ, կապ են ստեղծում ուսուցման պլանավորված նպատակի և վերջնական արդյունքի միջև։

Վերջերս շատ են խոսում տարբեր մեթոդների մասին, որ ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, բայց սա չի նշանակում, որ մեթոդի ընտրությունը կամայական պետք է լինի, քանի որ մեթոդի կիրառման բուն նպատակը պետք է լինի ուսուցման նպատակների իրականացմանը հասնելը, հասնել դասի նախապես ծրագրված նպատակին։

Փոխներգործուն (ինտերակտիվ) ուսուցման էությունը այն է, որ ***բոլոր սովորողներն ընդգրկվում են ուսումնառության մեջ։***

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

1. փոխներգործություն, փոխուսուցում,
2. սովորողի ակտիվություն,
3. համագործակցություն,
4. ինքնահաստատման խրախուսում,
5. հետադարձ կապի ապահովում։

Փոխներգործուն մեթոդի հիմքում ընկած է երկխոսությունը ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև։ Երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և, ամենակարևորը, զարգանում է աշակերտի խոսքը։ Այս մեթոդի նպատակն է՝ աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ձեռք բերված գիտելիքները։

Փոխներգործուն մեթոդի առանձնահատկություններն են.

- ✓ աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով,
- ✓ աշակերտը հենվում է ոչ այնքան իր հիշողության, այլ ինքնուրույն ստեղծագործական, քննադատական մտածողությանը,
- ✓ աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար,
- ✓ աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ,
- ✓ նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում իմի բերել, ամփոփել, ակտիվացնել և կիրառել սովորածը,
- ✓ ստեղծվում է ինքնուրույնության միջավայր։

Խմբային ուսուցումը հիմնված է չորս հիմնական սկզբունքների վրա.


սոցիալական փախազդեցություն
դրական փոխհարաբերություններ
անձնական պատասխանատվություն
յուրաքանչյուր մասնակցության հավասար մասնաբաժին

Նպատակն ու խնդիրները.

- ✓ բարձրացնել աշակերտների գիտելիքների մակարդակը,
- ✓ զարգացնել ինքնուրույն ուսումնական գործունեության հմտություններ,
- ✓ պատասխանատվության զգացում իր կատարած աշխատանքի հանդեպ,
- ✓ առաջացնել հետաքրքրություն հայոց լեզվի և գրականության նկատմամբ,
- ✓ զարգացնել աշակերտի գրավոր և բանավոր խոսքը։

Առավելություններն են.

1. Աճում է կրթական և ճանաչողական մոտիվացիան,
2. նվազում է աշակերտների անհանգստության մակարդակը, անհաջող լինելու վախը,
3. խմբում ավելի բարձր է սովորելու կարողությունը, թեմայի յուրացման և գիտելիքների թարմացման արդյունավետությունը,
4. տեղի է ունենում փոխադարձ ուսուցում, քանի որ յուրաքանչյուր աշակերտ իր ներդրումն է ունենում ընդհանուր աշխատանքի մեջ,
5. բարելավվում է դասարանում հոգեբանական մթնոլորտը, խմբային աշխատանքը նպաստում է հանդուրժողականության զարգացմանը, երկխոսություն վարելու և սեփական տեսակետը վիճարկելու կարողության զարգացմանը։

7-րդ դասարանում Հ.Սահյանի բանաստեղծություններն ուսումնասիրելիս օգտագործում են ***<u>երեք բանալի, մեկ կողպեք</u>*** մեթոդը։

Հանձնարարում եմ դուրս գրել երեք նախադասություն, որոնք իրենց կարծիքով հիմնական գաղափարն են արտահայտում։ Կարդում են, կազմում մեկ նախադասություն սեփական բառերով, որն արտահայտում է տվյալ ստեղծագործության բովանդակությունը։ Սա կողպեքն է։ Երբ խումբը կազմում է իր կողպեքը, ներկայացնում է մյուսին։ Խմբերը փորձում են կռահել, թե որ բանաստեղծությունից է։ (Կախվել է ժայռը անդունդի գլխին…)

Կարելի է գրականության ժամերին հաճախակի կազմակերպել խմբային աշխատանքներ՝ հաշվի առնելով աշակերտների հմտություններն ու կարողությունները։

ՄԵԹՈԴՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԱՐՄԱՐ ԵՆ ԿԻՐԱՌԵԼ ԴԱՍԻ ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ.

1. մտագրոհ,
2. խմբավորում,
3. պրիզմա,
4. մտածիր, զույգ կազմիր, քննարկիր,
5. գուս (գիտեմ, ուզում եմ սովորել, սովորել եմ),
6. դերային խաղ։

Հաղորդակցման առաջին րոպեներից աշակերտը որոշում է դիմացինին լսել, թե՝ ոչ։ Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է։ Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին։ Սկզբի համար լավագույն մեթոդը **մտագրոհն է։**

Սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու և հետաքրքրություն առաջացնելու նպատակով նախապես ընտրվում է թեմայի հետ խիստ կապված և հետաքրքրաշարժ մի փաստ կամ դրվագ և ընթերցում կամ ասմունքում այն։

Օրինակ՝ Հ.Սահյանի կյանքը ներկայացնելիս ընտրել մտագրոհ մեթոդը՝ ասմունքելով «Ինձ բացակա չդնեք» բանաստեղծությունից մի հատված։ Երբ աշակերտները հետաքրքրվում են՝ ո՞ւմ մասին է, ուսուցիչը կսկսի հաղորդել։

Դասի յուրաքանչյուր փուլ ունի հենց այդ փուլին բնորոշ մեթոդը, ուստի աշակերտներին պետք է հնարավորություն տալ միասին աշխատելու, սովորելու, ստեղծագործելու, իրար օգնելու, ինչը բավականին կարևոր է։



Մեթոդներ, որոնք հարմար են օգտագործել դասի ընկալման փուլում.

- ✓ T աղյուսակ,
- ✓ գաղափարների քարտեզագրում,
- ✓ Վենի դիագրամ,
- ✓ փոխներգործուն նշաններ,
- ✓ բանավեճ,
- ✓ զրույց։

Կշռադատման փուլում նախընտրելի է գործածել հետևյալ մեթոդները.

- ✓ քառաբաժման,
- ✓ գնահատման անիվ,
- ✓ իրավիճակների վերլուծություն,
- ✓ մտքերի տարափ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԹԵՄԱ՝ Հ.Սահյան- 4 ժամ նյութի ուսումնասիրություն, 1 ժամ թեմատիկ գրավոր աշխատանք

7-րդ դասարանցին գրականությունը՝ իբրև ինքնուրույն ուսումնասիրության առարկա, նոր-նոր է սկսում գիտակցել։ Ուստի ժանրի մասին խոսելուց առաջ հարկ է բացատրել գրական ստեղծագործությունն առհասարակ։ Բավական է, որ աշակերտն իմանա, որ գրական ստեղծագործության միջոցով դրանց հեղինակները իրենց մտքերը, զգացմունքները, գաղափարները հաղորդում են ուրիշներին։ Գրական ստեղծագործությունը խոսք է, որն ունի յուրահատուկ օրենքներ, պատկերավոր է, զգացմունքային։ Երեխաներին պետք է հասկացնել, որ բանաստեղծությունը ևս գեղարվեստական ստեղծագործություն է։ Առաջին հերթին պետք է կարդալ բանաստեղծությունը, ցույց տալ, որ արտահայտում է խոհ, ապրում, մտածողություն, ներկայացնում է բանաստեղծի տարբեր-տարբեր հոգեվիճակները։ Բոլոր բանաստեղծություններն էլ մի ներքին կապ ունեն իրար հետ, ներկայացնում են նույն ստեղծագործող անհատի հոգու կենսագրությունը, ունեն բառապաշարի, լեզվամտածողության ընդհանրություններ։ Հենց դրանք էլ բանաստեղծական շարքի հիմնական հատկանիշներն են։

Սահյանի համար ծննդավայրն իր հիասքանչ բնությամբ բանաստեղծի համար դարձել է.

Ներշնչանքի աղբյուր՝ «Իմ քարափներն ու ես»…

Հեռավոր կարոտ՝ «Նաիրյան դալա բարդի»…

Թախիծ, ուրախություն՝ «Սեզամ բացվիր»…

Կենսագրությունը սկսել մտագրոհ մեթոդով, ասմունքել «Ինձ բացակա չդնեք» բանաստեղծությունից մի հատված.

Ձեր լռությունը զնգում,

Զրնգում է ձորով մեկ,

Ձեր լռության համերգում

Ինձ բացակա չդնեք։

Քանի որ աշակերտները եղել էին բանաստեղծի տուն-թանգարանում՝ ապահովելով միջառարկայական կապը, **քարտեզագրում** մեթոդով մտովի ուղևորվում են դեպի Լոր՝ ամրացնելով դրոշ յուրաքանչյուր բնակավայրում՝ մինչև Լոր։

Շրջագայություն մեթոդի օգտագործումով մտովի հասնում են Լոր՝ նշելով տեղանունները։

Դուրս եկանք Սիսիանից, ո՞ւր ենք ուղևորվում, ո՞ւր հասանք (նշում են աշակերտները)։



Այնուհետև հաղորդել կենսագրական տեղեկությունները և նշել հիմնական ժողովածուները՝ կանգ առնելով հեղինակի խոսքերի մեկնաբանության վրա.

«Ես գրում եմ իմ մասին: Եվ այդ իմ մասին գրած բանաստեղծություններում ուրիշները ճանաչում են ինձ»:

Սահյանի քնարերգության մեջ առանձնանում են բովանդակային մի քանի ուղղություններ՝ երգ երգի մասին, բնության երգ, Հայաստանի երգ, աշխատանքի երգ, սիրո երգ և այս ամենը միասնաբար՝ որպես մարդու և հավերժության երգ:

II-ՐԴ, III-ՐԴ ԵՎ IV-ՐԴ ԺԱՄԵՐԸ ՆՎԻՐԵԼ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Այդ ժամերը բաժանել հետևյալ փուլերի՝ խթանման, իմաստի ընկալման և կշռադատման (ԽԻԿ):

ԽԹԱՆՈՒՄ

Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները: Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով քննարկվող նյութին: Աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

ՄԵԹՈԴՆԵՐ՝ «Մտագրոհ», «Խմբավորում», «5 րոպեանոց ազատ աշխատանք», «Ուղղորդված ընթերցանություն»:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Իմացության նոր կառուցվածքի ստեղծում, բառային աշխատանք (բացատրություն, հոմանիշային և հականիշային աշխատանք):

ՄԵԹՈԴՆԵՐ՝ «T-աձև աղյուսակ», «Համառոտ դասախոսություն», «Բանավեճ», «Ուղղորդված ընթերցանություն»:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Սովորողները նոր ստացված տեղեկությունները կարողանան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով: Նոր գիտելիքները միաձուլել ունեցածին և կատարել դրանց աստիճանական ինտեգրում:

ՄԵԹՈԴՆԵՐ՝ «Քառաբաժան», «Խորանարդում»:

Յուրաքանչյուր դասից հետո անհրաժեշտ է պարզել, թե.

- ✓ արդյոք հասկացան նյութը, իրագործվեց դասի նպատակը,
- ✓ ժամանակի բաշխումը իրատեսական էր,
- ✓ ինչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել:

Կարելի է նաև ուսուցիչը նյութը մատուցելուց առաջ իր առջև դնի որոշակի հարցեր, որոնց օգնությամբ ավելի հստակ կպատկերացնի նյութի՝ դասին պատրաստ լինելը և բարելավել դասի պլանը.

- ⇒ սահմանել դասի նպատակը և ակնկալվող արդյունքները,
- ⇒ ինչպես համոզվել, որ աշակերտները պատրաստ են դասի քննարկմանը,
- ⇒ ինչպես կառուցել դասի ընթացքը,
- ⇒ իրատեսական են ակնկալիքները ժամանակի առումով,
- ⇒ ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ինչպես գնահատել,
- ⇒ ինչպիսի մոտեցում, վերաբերմունք, զգալու կարողություն պետք է ձևավորվի:

Նման հարցերի հստակ պատասխանները թույլ կտան ճիշտ որոշելու դասավանդման մեթոդը:

Ինձ համար ընդունելի է նաև, որ թեմայի ավարտին հստակեցվի աշակերտների ավարտին հասնելը թեմայի ընկալման նշումները հետևյալ ձևով:

28 աշակերտից		
ավարտին հասցրեց	**մասամբ հասցրեց**	**ավարտին չհասցրեց**
14 աշակերտ	9 աշակերտ	3 աշակերտ (2 աշակերտ ԿԱՊԿՈՒ)

Կարող են նաև աշակերտները կատարել դիտարկումներ աղյուսակի ձևով, երբ կավարտեն թեման ամբողջությամբ:

	Այո	*Ոչ*	*Այլ պատասխան*
Առաջադրանքները հետաքրքիր էին	✓		
Թեմայի վերաբերյալ հարցեր եմ տվել	✓		
Հեշտությամբ կատարեցի	✓		
Ցանկանում եմ նորից քննարկել	✓		
Դուր եկավ	✓		
Կփոխեիր որևէ բան		✓	

Ավանդական և փոխներգորուն մեթոդների մասին մանկավարժական գրականության մեջ շատ է խոսվում, կիրառվում է շատ և ունի արդյունավետ արդյունքներ, ինքս էլ կիրառում եմ այդ մեթոդները միջին դասարաններում: Առավել գործածական եմ համարում փոխներգործուն մեթոդը, որը հնարավորություն է տալիս ճիշտ կատարել անցումային փուլերը, աշակերտներին հնարավորություն է տալիս ինքնուրույն մտքեր հաղորդել, ձևավորել քննադատական մոտեցում ուսուցանվող նյութի շրջանակում: Ձևավորում է ինքնաարտահայտման

կարողություն և համագործակցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փոխներգործուն մեթոդը բխում է աշակերտի անմիջական հետաքրքրությունից, հենվում է նախկինում նրա ձեռք բերած փորձի, գիտելիքների և կարողությունների վրա, համապատասխանում է տարիքային առանձնահատկություններին և հետաքրքրություններին: Նպաստում է ընդլայնելու իմացության շրջանակը, զարգացնում է աշակերտի տրամաբանությունը, ճանաչողական որակները՝ վերլուծել, դատողություններ անել, ընդհանրացնել, համադրել, քննադատական մոտեցում հանդես բերել, եզրահանգումներ անել և ստեղծագործել: Խիստ կարևոր է անձի՝ որպես հասարակության

լիիրավ անդամի, համագործակցող և նորություններին ճկուն ձևով արձագանքող անհատի ձևավորումը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ավանդական և փոխներգործուն մեթոդների առավելությունը, եկա հետևյալ եզրակացության, որ **<u>արդյունավետ է փոխներգործուն մեթոդը,</u>** որովհետև.

- աշակերտների մեծամասնությունը ներգրավվում են ուսումնական գործընթացի տարբեր փուլերում,
- դասի պրոցեսի 20-25 րոպեն ավելի ակտիվ են,
- աշակերտները ավելի ուշադիր են լինում, երբ կարողանում են լսել: Եթե չի լսում, ապա չի կենտրոնանում առաջադրված հարցի վրա:
- այս մեթոդի կիրառման շրջանակում պետք է ուշադրություն դարձնել աշակերտի տարիքային առանձնահատկություններին և ցուցաբերել անհատական մոտեցում:
- ԿԱՊԿՈՒ աշակերտներին մասնակից դարձնել խմբային աշխատանքներին (ըստ հանարավորության):

Հայոց լեզվի և գրականության ուսումնասիրության արդյունքում ձևավորվում է հայեցի լեզվամտածողություն, որն արտահայտվում է հայերենով՝ բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու կարողությունների դրսևորման առումով:

Այս բոլոր աշխատանքների կատարման հաջողությանը նպաստում է փոխներգործուն մեթոդը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ՄԵԹՈԴՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԱՐՄԱՐ ԵՆ ԿԻՐԱՌԵԼ ԴԱՍԻ ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ 10

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ 12

ԹԵՄԱ՝ Հ.Սահյան- 4 ժամ նյութի ուսումնասիրություն, 1 ժամ թեմատիկ գրավոր աշխատանք 12

II-ՐԴ, III-ՐԴ ԵՎ IV-ՐԴ ԺԱՄԵՐԸ ՆՎԻՐԵԼ ՍՏԵՂԾԱԳՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

Օգտագործված գրականության ցանկ

1. Կիրակոսյան – Մեթոդական ձեռնարկ
2. Ս. Խաչատրյան – Ուսուցման արդյունավետ հնարներ
3. Վ. Գյոզալյան, Լ. Առուշանյան, Ս. Գասպարյան – Ուսուցչի ուղեցույց – տետր, Օրվա դասի պլան